ՀՀ ԳԱԱ-ն ցավակցական նամակ է հղել Ուկրաինայի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Բորիս Պատոնի մահվան կապակցությամբ

Օգոստոսի 19-ին 102 տարեկան հասակում կյանքից հեռացավ Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Բորիս Պատոնը: Աշխարհահռչակ գիտնականի մահվան կապակցությամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ) ցավակցական նամակ է հղել Ուկրաինայի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությանը: «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ նախագահությունը և Հայաստանի ողջ գիտական հասարակությունը խորապես սգում են Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, աշխարհահռչակ գիտնական Բորիս Եվգենիի Պատոնի մահը: Ակադեմիկոս Բորիս Պատոնի գիտական և գիտակազմակերպական գործունեությունը համաշխարհային ճանաչում է ստացել: Նա զգալի ներդրում ունի մետալուրգիայի զարգացման գործում, նրա անմիջական ղեկավարությամբ իրականացվել են խոշոր ծրագրեր:

Հնարավոր չէ գերագնահատել ակադեմիկոս Բորիս Պատոնի մեծ ներդրումը Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի զարգացման մեջ: Նրա հեղինակությունը և ջանքերը որոշիչ դեր խաղացին գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի կայացման և գործունեության ծավալման հարցում՝ ծանրակշիռ ներդրում ունենալով հետխորհրդային տարածաշրջանում գիտության պահպանման և զարգացման գործում:

Ակադեմիկոս Բորիս Պատոնն անվիճելի ներդրում ունի Ուկրաինայի և Հայաստանի գիտական կոլեկտիվների միջև կապերի ամրապնդման գործում: Երկարամյա ընկերությունը միավորել էր ակադեմիկոս Պատոնին և ՀՀ ԳԱԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանին:

Բորիս Պատոնը ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ էր և պարգևատրվել է Հայաստանի ազգային բարձրագույն՝ Անանիա Շիրակացու անվան մեդալով, ով միջնադարյան հայ առաջատար գիտնական էր:

Հարգելի՛ գործընկերներ, ընդունե՛ք մեր անկեղծ ցավակցությունը: Ակադեմիկոս Բորիս Պատոնի հիշատակը հավերժ կմնա հայ գիտնականների սրտերում և մտքերում»,- նշված է նամակում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն